ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

(«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» և «Էլ Շին» ՍՊԸ-ի միջև 31.10.2023թ. կնքված «ՀՀ Լոռու մարզի Արդվի և Մղարթ բնակավայրի ջրամատակարարման համակարգի արտաքին և ներքին ցանցի կառուցման» աշխատանքների կատարման թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2023/1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին)

ք. Երևան «11» Մարտի **2024թ.**

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն», **ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի,** որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Էլ Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Էդգար Ասատրյանի,** որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **31.10.2023թ. Կողմերի միջև կնքված «ՀՀ Լոռու մարզի Արդվի և Մղարթ բնակավայրի ջրամատակարարման համակարգի արտաքին և ներքին ցանցի կառուցման» աշխատանքների կատարման թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2023/1** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. «Պայմանագրի «**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**» բաժնի «**3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**» կետը լրացնել նոր **3.1.8** ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«3.1.8 Առաջարկել Կապալառուին կասեցնել պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:»

2. Պայմանագրի «**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**» բաժնի «**3.3 Կապալառուն իրավունք ունի՝**» կետը լրացնել նոր **3.3.3** ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«3.3.3 Առաջարկել Պատվիրատուին կասեցնել պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:»:

3. «Պայմանագրի «**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**» բաժինը լրացնել նոր **8.14** կետով հետևյալ բովանդակությամբ.

«8.14 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է կասեցվել աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացվելու դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների պայմանագրով

սահմանված աշխատանքների կատարումն անհնար է դարձել: Սույն կետի իմաստով՝ կասեցվող ժամանակահատվածը որոշվում է Պատվիրատուի կողմից և դրա մասին կողմերի միջև կնքվում է համաձայնագիր:»:

4. Սույն համաձայնագրի առաջինից երրորդ կետերով սահմանված դրույթները կիրառելի են Պայմանագրի կնքման պահից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

6. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

7. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՀՀ ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31
ՀՎՀՀ 00846441
Հ/Հ 900000905878
գործադիր տնօրեն

_____ Ա. ԲԱՂԻՆՅԱՆ
(ստորագրություն)

Կ. S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էլ Շին» ՍՊԸ
.ասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Ադոնցի 10
ՀՎՀՀ՝ 04229683
Հ/հ՝ 163158047783
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
տնօրեն

_____ Է. ԱՍԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

Կ. S.